ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2025 թվականի N 460

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԷՎԵԼԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ»-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աբովյանի համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների 2025 թվականի կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերք ձեռք բերելու նպատակով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում Աբովյանի համայնքապետարանի և անհատ ձեռնարկատեր «Էվելինա Գրիգորյան»-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 16-ին կնքվել է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 33-րդ կետի 12-րդ ենթակետը, 104-րդ կետը և Աբովյանի համայնքապետարանի և անհատ ձեռնարկատեր «Էվելինա Գրիգորյան»-ի միջև «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-2» ծածկագրով կնքված պայմանագրի 8.5, 8.15 կետերը՝ անհատ ձեռնարկատեր «Էվելինա Գրիգորյան»-ին ուղարկվել է ծանուցում և առաջարկվել կնքել համաձայնագիր, սակայն վերջինս հրաժարվել է և օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված համաձայնագիրը:
Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 27-ի N 6 արձանագրությունով, 2025 թվականի փետրվարի 04-ին պատվիրատուն տեղեկագրում հրապարակել և մասնակցի էլեկտրոնային փոստին է ուղարկել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աբովյանի համայնքապետարանի և անհատ ձեռնարկատեր «Էվելինա Գրիգորյան»-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը միակողմանի լուծվել է պատվիրատուի կողմից.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ անհատ ձեռնարկատեր «Էվելինա Գրիգորյան»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» օրենքով սահմանված ժամկետում և կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. փետրվարի 14
ք. Աբովյան